

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի (Կոմիտե) 2024թվականի դեկտեմբերի 02 -ի նիստի

Կոմիտեի նիստի վայրը՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Կոմիտեի նիստի սկիզբը՝ ժամը 12:00

Կոմիտեի նիստի վերջը՝ ժամը 12:30:

Նիստը նախագահում էր՝

Հակոբ Բալասյան – Բյուրեղավան համայնքի ղեկավար

Նիստին մասնակցում էին՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2022թվականի դեկտեմբերի 16 –ի N574 -Ա որոշմամբ սահմանված ներքին աուդիտի կոմիտեի անդամներ՝

Լիլիթ Ավուշյան – համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Վարուժան Մարտիրոսյան – համայնքապետարանի աշխատակազմի

ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Խաչատուր Գաբրիելյան – համայնքապետարանի աշխատակազմի համակարգիչների, ցանցի և ծրագրերի սպասարկող

Կոմիտեի նիստի օրակարգի հարցը

1. Բյուրեղավանի համայնքապետարանի 2025թվականի ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթի քննարկում և լրացում:
2. Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի՝ 2025թվականի ռիսկի ընտրանքային չափորոշիչների քանակի և կազմի որոշման քննարկում:

Զեկուցող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Նինա Մարկոսյան:

Նինա Մարկոսյանը նշեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով

հաստատված հավելվածի 89-րդ կետի, ներքին աուդիտի բաժինը Բյուրեղավան համայնքի ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ քննարկում և լրացնում է ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը: Ստուգաթերթը պետք է լրացվի յուրաքանչյուր տարվա համար, սակայն բացի առաջին տարվանից, հաջորդ տարիների ընթացքում կարիք չի լինի այն ամբողջովին լրացնել: Կարելի է կատարել անհրաժեշտ թարմացումներ:

Նինա Մարկոսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 101-րդ կետի համաձայն, Բյուրեղավան համայնքի ղեկավարը՝ համաձայնեցնելով ներքին աուդիտի կոմիտեի հետ, յուրաքանչյուր տարվա համար պետք է հաստատի ներքին աուդիտի բաժնի ռիսկի ընտրանքային չափորոշիչների քանակը և կազմը:

Համայնքի ղեկավարին և Կոմիտեի անդամներին ներկայացվեց Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 29-րդ կետով նախատեսված ռիսկերի գնահատման չափորոշիչները.

1. Նշանակալիություն,
2. Ֆինանսական ազդեցություն,
3. Ստացված ֆինանսավորման չափ,
4. Հայտնաբերված թերացումներ,
5. Փոփոխությունների մակարդակ,
6. Ստացված արձագանք,
7. Կիրառված պատժամիջոցներ և խրախուսանքներ,
8. Այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքներ,
9. Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ՝ պարտադիր:

Բաց քվեարկությամբ 4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով՝

Որոշվեց.

1.Բյուրեղավանի համայնքապետարանի 2025 թվականի ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը փոփոխությունների չենթարկել:

